ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594015
Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

ք. Երևան **19.10.2023թ.**

Որոշում
N ԱՆ-ԳՔ-2023/2
«ԱՐԿԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50»

Մասնակից՝ «ԱՐԿԱՏ» ՍՊԸ
/ՀՎՀՀ՝ 06950644, հասցե՝ ք. Վանաձոր, Թատերական 8/1-49/

Արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Արկատ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.09.2022 թվականին կնքված թիվ ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-ԻԽՆ-22/50.1 պայմանագրի(այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ընկերությունը ստանձնել էր իրականացնելու իրավական խորհրդատվության և դատական ներկայացուցչության ծառայություններ:

Ընկերության կողմից դատական ներկայացուցչություն իրականացնելու համար, Նախարարության և Ընկերության կողմից 20.09.2022 թվականին ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիման վրա, Ընկերությանն էր փոխանցվել Նախարարության կողմից վարվող՝ ՀՀ քաղաքացիություն շնորհելու և ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու մասին կայացված հրամանագրերի վիճարկմանն առնչվող (թվով 16), աշխատանքից ազատման հրամանների վիճարկման, վնասի հատուցման, գնումների գործընթացի ընթացքում կայացված որոշումների բողոքարկման և պայմանագրային պարտավորությունների չկատարման համար գումարի բռնագանձման պահանջների հետ կապված (թվով 12 գործ), Քրեակատարողական ծառայության գործառույթների իրականացման հետ կապված (թվով 19 գործ) դատական գործերը: Նշված գործերով Ընկերության կողմից ներկայացրած հաշվետվությունների հիման վրա Ընկերության կողմից կատարված առանձին դատավարական գործողությունների և Նախարարության համար անբարենպաստ դատական ակտերի

բողոքարկումների ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ընկերությունը նշված գործերով չի իրականացրել պատշաճ դատական ներկայացուցչություն և դրանով իսկ խախտել է Պայմանագրով իր վրա դրված պարտականությունները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.6-րդ կետի «ա» ենթակետը, այն է. «Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) Պատվիրատուի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պահանջներին կամ Կատարողի ներկայացրած հաշվետվության հիման վրա Պատվիրատուն հանգել է պատճառաբանված եզրակացության դատական ներկայացուցչության անարդյունավետ իրականացման վերաբերյալ», Նախարարությունը ս/թ հոկտեմբերի 9-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը, որի մասին ծանուցումը նույն օրը հրապարակվել է տեղեկագրում և ուղարկվել է Ընկերության էլեկտրոնային փոստին՝ Պայմանագրի 9.10 կետի համաձայն:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, (...):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

«Արկատ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ